

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀՄՍՈՒ ԳԻՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ




4-58

6869

Կարսի կամ, Կր


Մայր Մանկոն իր-

կարսի. 2ր.



4-88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԳԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



US. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

1951

~~6869~~ A I 6984

Մ Ա Յ Ո Ր
Մ Ա Մ Ի Կ Ո Ն
Խ Ա Չ Ա Ն Յ Ա Ն



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. խմբագիր՝ Վ. ԱՂԵՑԻՍՅԱՆ.

Академия Наук Армянской ССР
Институт Истории

СТ. КУРТИКЯН

М а ю р

МАМИКОН ХАЧАՆՅԱՆ

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1945

ՎՋ 01917 Պատ. № 997 Հրատ. № 259 Տիրած 4000.

1¹/₂ տպ. մամուլ, 1 մամուլում 29,720 տպ. նիշ.

Ստորագրված է տպագրության 16/VIII 1945 թ.

ՀՍՍՌ Գիտ. Ակադ. տպարան, Երևան, Արսիլյան 101.



Մի գեղեցիկ ու հպարտ լեռնաշղթա է ձգվում Կասպից ծովի արևմուտքից մինչև Վրաստանի չքնաղ հովիտները: Այդ լեռներից մեկի բարձունքում իրենց արծվաբույն գյուղերն էին կառուցել հայ շինարարները և անվանել Ղալաբաղի ու Վարդաշեն: Հերոսական անցյալ են ունեցել Նուխու դավառի անտառների և ժայռերի միջ ծվարած այս գյուղերի բնակիչները: Այստեղ ալեհեր հայ աշուղն իր սազի հրգը նվիրել է դավիթբեկյան հերոսամարտերին, հրգել է հայ ժողովրդի դարավոր սգորումները բռնակալների դեմ, հրգել է ժողովուրդների բարեկամությունն ու սերը: 1918 թվականին, երբ դերմանա-թյուրքական հորդաները առաջ էին ձգտում գեղի սովհատական Բաքու, Ղալաբաղի գյուղի ժողովուրդը, մյուս գյուղերի հետ միասին, հերոսական զիմարբույթյուն կազմակերպեց դերմանական ու թյուրքական զերազանց ուժերին և այդ

ժարտերում հարստացրեց իր ժողովրդի զենքի փառքը:

Այս գյուղում է 1898 թվականին ծնվել Մամիկոն Ներսեսի Խաչանյանը:

Դաժան է եղել Մամիկոնի ժանկուլթյունը՝ Նրա հայրը՝ Ներսեսը, Ղայաբաշխում բաւարակություն է արել՝ իր չքավոր ընտանիքի գոյությունը պահպանելու համար: Հասագայում նա իր ընտանիքը փոխադրել է հարևան Վարդաշեն գյուղը, հուսալով ապրուստի ավելի տանելի պայմաններ գտնել: Այնտեղ նա մի առժամանակ դարձել է գյուղական դարբին:

Ներսեսը գեղեցիկ ձայն ուներ և ոտանավորներ հորինելու շնորհք: Նրա երգերը, հատկապես բայաթիները, մեծ հաճույքով էին լսում համագյուղացիները: Ու նա մի օր որոշեց սազն առնել իր ձեռքը, աշուղություն անել և այգալիսով հայթայթել իր ընտանիքի ապրուստը:

Այս ժամանակները փոքրիկ Մամիկոնը սովորում էր գյուղի ծխական դպրոցում և երբեմն, ազատ ժամերին, իր ժանկական

քաղցր ձայնով ձայնակցում հոր աշուղական սաղին: Նա ծխական դպրոցում սովորեց մինչև 1909 թվականը, որից հետո անասական ծանր սլայմանները նրան հարկադրեցին պանդխտել Բաքու և բանվորություն անելով վաստակել իր օրվա ապրուստը: Ծանր, ֆիզիկապես հյուժիչ աշխատանքից հետո նա հաճախ խուսափում էր իր բարեկամի մոտ գիշերելուց և օթևան էր գտնում բաց երկնքի տակ, քաղաքային այգու հատարանների վրա:

Բաքվում Մամիկոնը սեագործ բանվորություն անելով, 1909—1912 թվականներին սկսում է սովորել արհեստավորական դպրոցում, որն ավարտում է որպես փականադործ: 1912—1914 թվականներին նա շարունակում է սովորել Բաքվի Միքայելյան արհեստավորական դպրոցում, որտեղ ստանում է ընդհանուր տեխնիկական կրթություն՝ նավթարդյունաբերական թեքումով: Ուսման այս ամբողջ ժամանակամիջոցում, ամառները, որպես յուզող նա աշխատում է Յանանդադում և ապա փականա-

գործությունն է անուժ Լևինսոնի մեքենաշինական գործարանում: 1916—1917 թվականներին Սաչանյանը զորակոչի է ենթարկվում:

Շուտով Մամիկոնն ստանում է ենթասպրապորշչիկի կոչում, մասնակցում է ուսությունը քական ուղմաճակատում մղված մարտերին և իր անձնական սխրագործությունների համար արժանանում Գևորգյան խաչերի: Կարճ ժամանակամիջոցում նա դառնում է Գևորգյան խաչերի լրիվ կավալեր:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Սաչանյանը հայկական Ձ-րդ հրաձգային գնդում նշանակվում է գումարտակի հրամանատար: Ապա սովետա-թյունը քական սահմանի վրանա, որպես զորամասի պետ, ծառայում է մինչև 1923 թվականը, իսկ մինչև 1925 թվականը ծառայում է Մյանսիկյանի անվան հայկական զինվորական դպրոցում, որի լիկվիդացիայից հետո անցնում է քաղաքացիական աշխատանքի և որպես փականագործ-միխանիկ աշխատում է Նրևանի միշարք ձևնարկություններում:

1929 թ. նա գործուղվում է Թբիլիսի, որտեղ ավարտում է տեխնորմիրովչչիկների դասընթացները և վերադառնալով Երևան, մեխանիկական գործարանում նշանակվում է աշխատանքի կազմակերպման բաժնի պետ։ Այս աշխատանքում նա մնում է մինչև 1937 թվականը։ Միաժամանակ, 1932 թվականից սկսած, Խաչանյանը Երևանի մեխանիկական, քիմիական և լեռնային տեխնիկումներում դասավանդում է իր մասնագիտությունը։

* * *

Երբ վրա հասավ Հայրենական Մեծ պատերազմը, Մամիկոն Խաչանյանն աշխատում էր Երևանում, Սոնդարդյունաբերության ժողկոմատում որպես բաժնի վարիչ։ Կյանքի 45 տարիները արծաթադոծել էին նրա մազերը։ Սակայն պատանեկական խանդավառությունն ու հին զինվորի սիրտը մնացել էր անաղարտ։

Պատերազմի հենց սկզբից նա կամավոր գնաց Կարմիր Բանակի շարքերը։

Խաչանյանին նշանակեցին Հայկական

89-րդ հրաձգային դիվիզիայի N-րդ դրն-
դային դպրոցի պետ: Նրա առաջ մարտա-
կան խնդիր դրվեց ռազմաճակատի համար
արագ թափով պատրաստել կրտսեր հրամա-
նատարների որակյալ կադրեր: Եվ նա, քունն
ու հանգիստը մոռացած, գիշեր-ցերեկ չէր բա-
ժանվում մարտիկներից, նրանց սովորե-
ցնում էր ռազմական գործը և իր երիտա-
սարգական խանդավառությամբ համակում
բոլորին:

Նա հանգստություն չուներ: Նրա սիրտը
այրվում էր վրեժի կիզիչ զգացումով հանդեպ
մեր երկիրը ներխուժած գերմանական վան-
դալների: Նա սրտատրոփ սպասում էր այն
օրվան, երբ ինքը ևս բախտ կունենա տնձամբ
մասնակցելու գերմանա-ֆաշիստական զավ-
թիչների դեմ մղվող մարտերին: Կապիտան
Սաչանյանի համար խնդության օր էր, երբ
հայտնեցին, որ մեկնում է ռազմաճակատ:
1942 թվականի օգոստոս ամսից նա, որպես
վարժական գումարտակի հրամանատար, մաս-
նակցեց Կովկասի համար մղվող մարտերին:
1942 թ. նոյեմբերին Սաչանյանին լիո-

խաղրեցին ռազմաճակատի ամենաողատա-
խանատու հատվածներից մեկը՝ որպէս
N-րդ գնդի զուտորտակներէից մեկի հրա-
մանատար:

Սկսվեց կապիտան Սաչանյանի սխրա-
գործութիւններով լի մարտական կյանքը:

* * *

Դիվիզիայի հրամանատարութիւնը կա-
պիտան Սաչանյանի առաջ մարտական խըն-
դիւր պրեց՝ ուժեղացրած վաշտով գրավել
154,4 բարձունքը և այդպիսով կտրիւ Մոզ-
զոկ—Թերեք ճանապարհը: Այդ կարևոր ա-
ռաջադրանքի կատարումը նշանակում էր՝
խանգարել գերմանա-Ֆաշիստական բանակի
հարձակողական հետագա գործողութիւն-
ները, գրկել նրան մաներելու հնարավորու-
թիւնից:

Գերմանացիների կողմից խիստ ամրաց-
ված այդ կարևոր բարձունքի վրա մի քանի
անգամ դրոհել էին Կարմիր Բանակի տար-
բեր զորամասեր: Բայց այդ գրոհները ան-
հաջողութեան էին մատնվել: Կապիտանն

այդ գիտեր և հաշվի էր առնում իր վրտ գըր-
ված խնդրի կատարման ամբողջ լրջությունը:

... Գիշերն իջավ լեռների և դաշտերի
վրա: Աստղալույսով հագիվ էին նկատվում
դեպի երկինք բարձրացող լեռնագագաթ-
ները: Սաչանյանը դուրս եկավ ծխապատ,
բայց դուրեկան տաքություն ունեցող բլին-
դաժից: Դրսում, տափաստաններից փչող
սառը քամին արցունքով լցրեց նրա սչ-
քերը: Թշնամու կողմից արձակվեց մի հրթիռ,
որը մեր և գերմանացիների գիրքերի միջև
ընկած տարածությունը մի քանի բոպե կա-
նաչավուն լույսով լուսավորելուց հետո՝ հան-
գավ: Նորից տիրեց խավարն ու գիշերային
խոր լռությունը:

Կապիտան Սաչանյանն իր մարտիկներին
հրաման տվեց պատրաստվել: Ժամը ուղիղ
1-ին նա, իր փոքրաթիվ կորիճների գլուխն
անցած՝ թշնամու առաջավոր գծից աննկա-
տելիորեն թափանցեց նրա թիկունքը:
Նրանք որոշ առաջխաղացումից հետո կանգ
էին առնում, լսում շրջապատը և հավաստիա-
նալով, որ թշնամու զորամասեր չկան, նորից

շարունակում էին իրենց ճանապարհը: Մարտիկները զետեղերքում կանգ առան: Հրամանատարը համառոտակի բացատրեց խընդիրը: Այժմ նրանք թշնամու աջակողմյան թիկունքից պետք է բարձրանային սարը և անակնկալ հարվածով խուճապ առաջացնելով՝ բարձունքից շարսեին թշնամուն:

Սարն ի վեր մազլցող մարտիկներին առջևից դնում էր ինքը՝ հրամանատարը: Նա ուղեցույց էր բոլորի համար: Նրբ նա կանգ էր առնում ու պառկում, նույնն էին անում և բոլոր ռազմիկները:

Գիշերային դորժողությունների վարպետ հրամանատարը մարտիկներին հաճախ էր տեսել, որ տասնապատիկ գերակշիռ ուժ ունեցող թշնամուն էլ կարելի է հաղթել, եթե հարվածը լինի անակնկալ և շեշտակի: Դրան էլ ձգտում էին սարը մազլցողները:

Գիշերվա ժամը 3-ին նրանք արդեն մոտեցել էին բարձունքին: Կապիտանը հրաման տվեց մարտիկներին պառկել ու հանդրստանալ:

Գիշերային լուսթյան մեջ լիռնային փո-

Թորկահույզ գետակի շառաչը հասնում էր մինչև այս բարձունքները: Մարդկանց մեջ այդ շառաչը զարթեցրել էր քաղցր հուշեր ու կարոտի զգացմունք: Թվում էր, թե ներքևում աղմկում է հայրենի Չանգուն, Որոտանը կամ Դեբեզը: Ու կարոտի զգացմունքը վեր էր ածվում վրեժի և ատելու թյան՝ ընդդեմ բարբարոս թշնամու, որը նրանց կտրել էր իրենց հայրենի օջախներից և իր սև թաթը մեկնել այդ նվիրական օջախների կրակը հանգցնելու համար:

Ռազմիկների մտորումներին վերջ տվեց հետախուզությունից վերադարձող հրամանատարը: Թշնամին գտնվում էր միայն հիսուն մետր հեռավորության վրա: Նրա կրակային կետերը դասավորված էին հակառակ ուղղությամբ: Փաշիսաները քնել էին: Կասլիտանը հրաման տվեց սվինները անցկացնել հրաչաններին և հետևել իրեն:

Երբ ընդամենը մի քանի մետր էր մնացել մինչև հիտլերականների դիրքերը, ուստական հզոր «ուռան» զարթեցրեց փաշիստ դինվորներին: Նրանք, խուճապի մատնված,

Թողեցին ամեն ինչ և սկսեցին փախչել աջ ու ձախ: Այդ իրարանցման ժամանակ լըսվում էր Խաչանյանի մարտակոչը.

— Մրախողխող արեք սրիկաներին, մի թողնեք, որ փախչեն:

Ու հայ կտրիճների ձեռքում անսոսք էր դործում սուսական հոշակավոր սվինը:

Լուսարացին հեռախոսի ուժեղ դանդից զարթնեց գիվիղիայի հրամանատարը:

— Ընկեր կոմդիվ,— գեկուցում էր կապիտան Մամիկոն Խաչանյանը,— Ձեր հրամանը կատարված է: Ժամը 4-ին բարձունքը զբաղվեց: Ձոհեր քիչ կան:

* * *

.... Թշնամու 60 տանկ և երկու գուժարտակ շարժվում էին առաջ՝ մեր պաշտպանության դիժը ճեղքելու համար:

Հեռախոսն ուժեղ դանդ սվեց: Սոսում էր գիվիղիայի հրամանատար դնդապետ Սարգսյանը:

— Թշնամին տանկային զրոհի է դալիս, ընկեր կապիտան, քեզ եմ վստահում...

— Թշնամին չի անցնի, ընկիր կոմդիվ,
— հղավ պատասխանը: Սաչանյանն օրեր
առաջ արդեն նախապատրաստվել էր թըշ-
նամու տանկային հակազորնը ետ մղելու:
Նա նույնիսկ նախատեսել էր նրանց գրոհի
ուղղությունը և նպատակահարմար կերպով
օգտագործելով տեղանքի պաշտպանական
հարմարությունները, ժամանակին ու ճըշ-
տորին դասավորել էր իր կրակային միջոց-
ները, զենքի բոլոր տեսակները և հանդիսա-
սպասում էր թշնամուն:

Հրեսանային և օդային ուժեղ ուժաւ-
կոծությունից հետո հորիզոնի վրա երևացին
ֆաշիստական սանկերի սև աշտարակները:

Կապիտան Սաչանյանն իր դիտակետից
դիտում էր տանկերի առաջխաղացումը:
Նրանք խելահեղ թափով, վայրենի ունո-
ցով, քար ու հող իրար խառնելով, շարժ-
վում էին դեպի մեր դիրքերը: Կարծես գա-
ղազած վիթխարի ճիվաղների մի ոհմակ
սանձադերձ մոտենում էր՝ իր ճանապարհին
սովեն ինչ ավերելու, ամեն ինչ կլանելու
ու ոչնչացնելու համար և թվում էր, որ

ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել երկաթի հեղեղը:

Այդ տեսարանը դիտում էր կապիտանը, դիտում էր ինքնավստահ:

— Ձեք անցնի, սրիկաներ, չեք անցնի... կտեսնենք հիմա՝ մեր սի՞րտն է ամուր, թե՞ ձեր պողպատը, — շնչաց նա:

Ու այդ բոպիին հնչեց նրա մարտական հրամանը.

— Իմ քաջեր, պատրաստ: Մեռնենք պատվով, բայց ոչ մի քայլ առաջ չթողնենք սրիկաներին:

Մարտիկները նոր ուժ ստացան, գոտեպնդվեցին ահավոր վտանգի հանդեպ և բազմաթիվ շուրթեր տարերայնորեն կրկնեցին.

— Կմեռնենք, բայց չենք թողնի, որ անցնեն սրիկաները...

Նաչանյանն ինքն էլ զինվեց նռնակներով և դիրք-գրավեց այնտեղ, որտեղ թըշնամու տանկերը կարող էին խրվել մեր պաշտպանության մեջ և ճեղքել այն:

Մարտիկները քողարկված և շնչները

6884
A 6864

պահած սպասում էին: Իսկ տանկերի հեղեղն
անընդհատ առաջ էր շարժվում: Նրանք
հազիվ 200 մետր հեռավորության վրա էին
գտնվում:

Իսկ ինչո՞ւ էր լռում հրամանատարը:
Ինչո՞ւ հրաման չէր տալիս կրակելու:

Զրահահարներն ու գնդացրորդները՝
մատները ձգանին, հաղիվ էին զսպում
իրենց:

Մի վայրկյան կապիտանը բռունցյան-
կություն ունեցյալ կրակելու հրաման տալ,
բայց զսպեց իրեն: Իսկ տանկային հեղեղը
մոտենում էր: Մարտիկների սրտերը ան-
հավերժությունից խփում էին ուժգին: Ար-
դյոք մի դժբախտություն չէ՞ր պատահել ի-
րենց հրամանատարի հետ: Չէ՞ որ ահա
թշնամու տանկերը շուտով կճգմեն իրենց,
իսկ իրենք չեն արձակել դեռ ոչ մի գնդակ:

Այդ լարված վայրկյանին հնչեց Խա-
չանյանի մարտակոչը: Քաշվեցին ձգան-
ները, և արճճի հեղեղ տեղաց տանկերի
ու նրանց հտեից եկող հետևակի վրա: Ս-
ոաջավոր մի քանի տանկեր կես շրջան

կատարեցին և կանգ առան ձխալով: Մի քանիսն առաջ անցան, մոտեցան մեր դիրքերին: Նույն այդ լսույսին տեղացին նըռնակները, և իրենց տեղերում մեխվեցին առաջ ձգտող այդ տանկերն ևս: Թշնամու մյուս տանկերը շուռ եկան ևս, դեպի իրենց ելման դիրքերը: Մեծ կորուստներ տալով՝ տանկերի հոսից եկող հետևակը նույնպես խուճապահար դիմեց փախուստի:

— Ահա այդպես, — շնչաց Սաչանյանը, ցուցամատով սրբելով իր ճակատին դույտցած քրտինքի կաթիլները:

Թշնամու տանկային դրոհը ձախողված էր:

* * *

... Գազազած թշնամին Մալգոբեկի տակ պատրաստվում էր նոր հարվածով ձեղքել մեր պաշտպանությունը: Աշնանային մի մռայլ օր էր: Հեռու սարերը պատեղ էին կաթնամշուշով: Խոնավ օդը թափանցում էր մինչև բլինդաժների, ուր քնած էին հողնած մարտիկները:

Լուսաբացին կապիտան Սաչանյանը դիտակետում քողարկված դիտում էր հակառակորդին: Հանկարծ թշնամու արկը պայթեց դիտակետի մոտ: Սաչանյանն արկի ուժեղ ալիքից ցնցվեց: Հետո, հեռախոսափողը վերցնելով, հայտնեց.

— Արկը փլաս չպատճառեց. շուտով թըշնամին կսկսի ուժեղ կրակ տեղալ. թաքնըվել բլինդաժներում և չպատասխանել թշնամուն:

Եվ իսկապես, քիչ անց, հակառակորդն սկսեց կատաղի կրակ թափել զենքի բոլոր տեսակներից: Մի կիլոմետր տարածության վրա վեց փողանի չորս ականանետ էր աշխատում:

— Ո՞նց է համբերում կապիտանը, — մտածում էին մարտիկները, լավ իմանալով հրամանատարի անհանգիստ և խիզախ բնավորությունը: Եվ նրանք եզրակացնում էին.

— Ո՞վ գիտե՛ ինչ խորամանկություն է նորից մտածում...

Մարտիկները, հողի տակ խորը խրամատավորված, սպասում էին:

Մեր պաշտպանութեան այս առաջագրի մի ժամից ավելի տևող մշակումից հետո՝ հակառակորդն արդեն հավատացած էր, որ ոչնչացված է մեր կենդանի ուժն ու տիրանիկան: Այդպես էր կարծում նաև աջ թևը պաշտպանող հարևան գումարտակի հրամանատարը:

Քիչ անց, հենց հարևան այդ ստորաբաժանման վրա թշնամին անցավ կատաղի գրոհի: Դրությունը լուրջ էր: Հրամանատարը հեռախոսով շտապ օգնություն էր պահանջում:

Այդ միջոցին լսվեց կապիտան Սաչունյանի հրամանը.

— Կրօնկ թշնամու զրոհող շղթաների վրա՝ Համբերությունից դուրս եկած մարտիկները թևային գնդացրային կրակ բացեցին ամբողջ հասակով պսիխիկ գրոհի գնացող հիտլերականների վրա: Առաջին երկու շղթան հնձվեց: Մյուս շարքերը տատանվեցին, և գրոհը վիժեց:

Այս անակնկալ օգնությունից հարևան ստորաբաժանման հրամանատարը նոր ուժ

ու վստահութիւնն ստացաւ: Հրճվանքից
ուժգին բարախեց նրա սիրտը, և նա բուռն
ցանկութիւնն զգաց զրկել, պինդ զրկել ու
համբուրել Խաչանյանին, այդ հնարամիտ և
հմուտ հրամանատարին:

Ապա մեր զորքերը ընդհանուր հակա-
գրոհի անցան դեպի բարձունքը՝ կրնկակոխ
հետապնդելով նահանջող հիտլիերականնե-
րին:

Նրեկոյան, հեռավոր լեռների հանում
մայր մտնող արեգակի ճառագայթները ու-
կեղոծել էին սարի դագաթին հաղթակա-
նորեն ծածանվող սովետական դրոշմ:

Եվ նոր անցկացված հեռախոսային լա-
ւերի միջից լսվեց դիվիզիայի հրամանա-
տարի առույգ ձայնը.

— Ընկեր կապիտան, շնորհավորում եմ
Ձեզ՝ հմուտ գործողութեան և փայլուն հաղ-
թանակի համար:

Շնորհավորանքի այդ կարճ խոսքը թա-
փանցեց Խաչանյանի սրտի խորքը և այն
լցրեց անզուսպ ընկրանքով:

Մարտիրից մեկի ընթացքում Սաչա-
նյանի գումարտակն ընկալ պաշարման մեջ:

Դիվիզիայի հրամանատարը կապիտա-
նին կարգադրեց զիմադրել մինչև գիշերը
վրա հասնելը և ապա օգտվելով մթությու-
նից, ճեղքել պաշարման շղթան ու միանալ
հիմնական զորամասերին:

Նահանջելու դեմ Սաչանյանի միտքն
ըմբոստացավ: Ինչո՞ւ չստիպել, որ թշնամին
ինքը նահանջի, մանավանդ որ, իր հետա-
խուզական տվյալներով, գումարտակի աջ
թևի բարձունքում ամրացած թշնամին ա-
ռանձին ուժ չէր ներկայացնում: Ինչո՞ւ
չոչնչացնել այդ մի տասնյակ ավտոմատու-
վորներին, որոնք իրենց զորամասերի հե-
տադա դործունեության համար այնտեղ
պլացդարմ էին ստեղծել:

... Դիշերը կապիտանը մի առժամանակ
չէր երևում: Քաղաքական դժուր նրա տե-
ղակալ Մնացական Սիմոնյանը մտահոգու-
թյան մեջ էր: Ահա ուր որ է դիվիզիայի

հրամանատարը զանգ կտա և կհարցնի խա-
չանյանի մասին: Իսկ ինքը ի՞նչ է պատաս-
խանելու:

Մի՞նչ այդ կապիտան խաչանյանը, լսա-
վար գիշերով, մի կապավորի հետ մոտեցել
էր գերմանացիներին վրաված բարձունքին և
սվինը հրացանին հագցրած առաջ էր շարժ-
վում:

Գիշերային այս անհասկանալի երթից
հոգնած և համբերությունն սպառած՝ կա-
պավոր մարտիկը հարց տվեց.

— Ընկեր կապիտան, այսպես ո՞ւր ենք
գնում գիշերով:

— Չե՞ս տեսնում, առաջանում ենք դեպի
բարձունքը:

— Ինչո՞ւ համար: Չէ՞ որ այդտեղ թըշ-
նամու սվտոմատավորներն են ամրացած:

— Ի՞նչ կա որ. հենց դրա համար էլ ա-
ռաջանում ենք, որպեսզի բարձունքից քշենք
թշնամու սվտոմատավորներին:

— Երկուսո՞վ: Հանձք էք անում նորից,
ընկեր կապիտան:

— Ինչո՞ւ երկուսով. տղերքը ձախ թևից

են բարձրանում: Ահա, ուր որ է կերևան:
Կապալորն ուժ ստացավ: Չէ՛, կարելի
էր վստահել իրենց սիրելի կապիտանի, զո-
րամասի հոր սողմական հմտությանը:

Ու նրանք նոր թափով առաջ շարժվե-
ցին:

Երբ ընդամենը մի քանի միտր էր մնա-
ցիլ մինչև թշնամու դիրքերը, Սաչանյանն
սկսեց «ուռա» տալ և բացականչել՝ «կեցցի՛
առևտական սվինը»:

Կապալորը հետևում էր կապիտանի
օրինակին:

Դերմանսական ավտոմատավորները, որ
իրենց ապահով զգալով, հանգիստ քնել էին
բարձունքում, դարթնեցին «ուռաներից»:
Նրանց թվաց, որ այդ հզոր «ուռան» դուրս
էր գալիս հարյուրավոր կոկորդններից: Դեռ
քունը գլխներին, հիտլերականներն անմի-
ջապես դուրս նետվեցին խրամատներից և
նոնակներն պայթյունը լսելով՝ խուճապահար
սկսեցին վախչել: Նրանցից ոմանց չէր
հաջողվել նույնիսկ ավտոմատները վերցնել:
Սակայն, ըստ երևույթին, հետագայում

նրանք բոլորն ուրախ էին, որ արագ շարժվելով կարողացան հակառակորդի «գերակշռող ուժերի օղակը ճեղքել և դուրս գալ պաշարումից»:

Նրանց երկար չհետապնդեցին ղիշերային խավարում:

Այսպես՝ կապիտան խաչանյանը դրավեց բարձունքը, քրտնած ու հոգնած նստեց մի թփի տակ, վար դրեց հրացանը, իր շինելի փեշի մեջ վառեց ծխախոտը և սկսեց ափի մեջ ծխել:

Իսկ հին ոսղմիկի կյանքի ամենահերջունիկ մոմենտներից մեկն էր...

Մի վայրկյան լուռթյունից հետո, սարսուրինակ այս հաղթանակից աշխուժացած, կապավորը հարց սովեց.

— Իսկ ռւր ևն մարտիկները, ընկեր կապիտան:

— Մարտիկները հոգնել են և այժմ նստած ծխում, հանգստանում են, — կատակեց խաչանյանը: Ապա կապավորի ուսին թեթև խփելով՝ ավելացրեց.

— Տեսա՞ր, որ հանաք չէի անու՛մ: Ահա երկուսով գրավեցինք բարձունքը:

— Ավելի ճիշտը՝ դուք մի հողով գրավեցիք, ընկեր կապիտան, — պատասխանեց կապավոր մարտիկը, հպարտ իր աներկյուղ ու հնարամիտ հրամանատարով:

Մի ժամ անց Սաչանյանը հեռախոսում էր.

— Ընկեր կոմգիւլ, աջ թևս արդեն բացիլ եմ:

— Ինչպե՞ս թե:

— Պարզապես: Դիշերային անակնկալ գրոհով գերմանացիներին քշեցինք աջ բարձունքից:

*
*
*

... Լուսաբացին, երբ կապիտան Սաչանյանը մոտեցել էր հեռախոսին՝ գիվիդիայի հրամանատարի հետ կապվելու համար, հեռախոսային փողի միջից լսեց գիվիդիայի հրամանատարի զայրապին ձայնը.

— Ես Ձեզ զգուշացրել եմ, որ նրան մե-

նակ չթողնեք, դուք պիտի կորցնեք նրան,
ընկեր Սիմոնյան:

Դիվիզիայի հրամանատարը ջղայնացած
խոսում էր կապիտան Սաչանյանի քաղա-
քական գծով տեղակալ Մնացական Սիմո-
նյանի հետ:

Բաղաշխատողն ընկել էր նեղ դրու-
թյան մեջ: Նա պատասխան չէր գտնում ար-
դարանալու համար:

Այդ վայրկյանին Սիմոնյանի փոխարեն
դիվիզիայի հրամանատարին անակնկալ
կերպով պատասխանեց ինքը Սաչանյանը.

— Ընկեր կոմդիվ, ի զուր մի ջղայնա-
նաք, Սաչանյանը կորչող պտուղ չի: Գի-
շերը իմ գրոհային ջոկատով ձախ բար-
ձունքն էլ մաքրեցի թշնամուց: Գերմանա-
ցիները նահանջեցին: Ես խոսում եմ բար-
ձունքի վրայից՝ գերմանական հեռախոսով:

Ռազմական այդ փայլուն գործողու-
թյունների առթիվ 1943 թ. հոկտեմ. 28-ին
կապիտան Սաչանյանը Երևան, իր կոլեկ-
տիվի անդամներին ուղարկած մի նամա-
կում հետևյալն էր գրում.

Ե՛րեկտեւութեան 19—21-ին (1942 թ.Ս.Գ.)
 հռչակավոր մարտեր մղեցի, երբ իմ գու-
 մարտակն օղակված էր հիտլերյան տասն
 անգամ գերազանցող ուժերով: Հրամանա-
 տարությունը հրամայեց ինձ՝ գումարտակը
 օղակից ազատել, ետ քաշվել նոր դիրքերի՝
 Փոխանակ նահանջելու, ես իմ քաջարի բա-
 նակայիններով երկու թևերից փշրեցի հիտ-
 լերյան օղակը, ետ շարտեցի պազանին.
 նա փախուստի դիմեց: Ես խրվելով նրա
 ամրությունները, ավելի սեպվեցի նրա
 պաշտպանության մեջ՝ սփինը ձեռքիս ձեռ-
 նամարտի տանելով իմ վաշտերը: Այդ
 մարտերը հանելուկ էին դարձել հրամանա-
 տարության համար:՝

Ռազմական կարևոր նշանակութուն ու-
 նեցող երկու բարձունքներից դեն շարտ-
 ված թշնամին ընկել էր չափազանց տննը-
 պաստ դրության մեջ, մեր զորամասերի
 կրակի տակ:

Այդ փայլուն հաղթանակի առթիվ ամ-

1 Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
 Պատմության ինստիտուտ, Հայրենական պատերազմի
 պատմության կաբինետ, գործ Մ. Խաչանյանի

բողջ ճակատով մեկ լսվեց ռազմաճակատի հրամանատարի ձայնը.

— Հմուտ և հաջող ռազմական գործողության ու անձական խիզախության համար շնորհակալություն եմ հայտնում կապիտան Մամիկոն Խաչանյանին և նրան առաջադրում եմ կառավարական պարգևատրման...

* *

1943 թ. սեպտեմբերի 3-ից սկսած, Հայկական հրաձգային 89-րդ դիվիզիան, գնդապետ Նվեր Մաֆարյանի հրամանատարությամբ, մասնակցում էր Նովորոսիյսկն ու Թամանի ամբողջ թերակղզին ֆաշիստական զավթիչներից ազատագրելու համար մղվող կատաղի մարտերին: Այստեղ անհրաժեշտ էր առաջին հերթին հաղթահարել «Դոլգայա» և «Սախարնայա Գոլովա» բարձունքների վրայով ձգվող գերմանական պաշտպանության «Կապուլյտ գիծը», որն սնտոփկ էր համարվում: Ռազմաճակատի ամբողջ երկարությամբ ու լայնությամբ լեռները, զժվարանցանելի անտառները գերմանացիները մոտ հրկու տարի անընդհատ

ամրացնելով, պատել էին դօտերի, դգօ-
տերի, տկանապատ դաշտերի, հակահետևա-
կային արգելակների խիտ ցանցով, որոնք
իրար միացված էին խոր ու երկար խրա-
մուղիներով:

Այս անառիկ համարված ամբողջյուն-
ների հաղթահարմանը մասնակցող մարտիկ-
ների ամենաառաջին շարքերում էին գտն-
վում մայրը Սաչանյանի քաջերը, որոնք
ստաջինը գրավեցին ռազմական կարևորա-
գույն նշանակութուն ունեցող «Դուզայա»
բարձունքը: Այս բարձունքի գրավման հա-
մար մղված արյունալի մարտերում թշնա-
մու գղօտի հրակնատն իր կրծքով ծածկե-
լով զոհվեց Սաչանյանի կտրիճներից մեկը,
Սովետական Միության Հերոս, ավագ
սերժանտ Հունան Ավետիսյանը:

Մայրը Սաչանյանն իր ռազմավարու-
թյամբ աչքի ընկավ շրջանային կենտրոն
Վերխնյայա Բականսկայայի համար մղված
մարտերում: Նա երկու լեռնաշղթաների մի-
ջով ճեղքեց հակառակորդի սլաշտպանու-
թյան դիժը, կտրեց թշնամու նահանջի ճա-

նապարհը, հաջողութեամբ ավարտելով
դիվիզիայի հրամանատար գնդապետ Ն. Սա-
ֆարյանի մաներային հմուտ տակտի-
կան: Թշնամու պաշտպանութեան սիրտը՝
«Դուգայա» լիռը գրավելուց հետո մայրը
Սաչանյանը դրոււմ էր. «Մի խումբ քա-
ջերով թափանցեցի Վերինյայա Բական-
սկայա՝ հակառակորդի թիկունքը, նույն-
պես և Նաղուխասկայա, Կրասնայա Գոս-
տոկայա, Գոստոկայա և այլն: Մարտի ծան-
րութիւնն ինձ վրա վերցնելով, քիչ զոհե-
րով ճանապարհ բացի իմ գնդի համար»:¹

Պատմական այս փայլուն ճակատամար-
տերի օրերին, 1943 թ. հոկտեմբերի 29-ին,
ռազմաճակատային «Առաջ, հանուն հայրե-
նիքի» թերթը մայրը Մամիկոն Սաչանյանի
մասին գրոււմ էր.

«Դեռ հին բանակոււմ իր սիրագործու-
թիւններով Գեորգյան խաչի լրիվ կալա-

¹ Հայկական ՍՍՌ-Գիտութիւնների Ակադե-
միայի Պատմութեան ինստիտուտ. Հայրենական պա-
տերազմի պատմութեան կարիքներ, գործ Մ. Սաչա-
նյանի:

լիբրի կոչմանն ու սլատվոնշաններին արժա-
նացած շարքային այդ գինովորը, սովետա-
կան հայրենասերի երխտասարդ ավյունով,
քաջության, հմուտ մարտավարման, հան-
դուգն գործեր նախաձեռնելու իր անձնա-
կան օրինակով նվաճել է երխտասարդ ու
հասուն սպաների սերն ու հարգանքը, դառ-
նալով Թամանյան ՑԳ-րդ գիվիզիայի սլար-
ժանքը»:

Կաղակական ստանիցաներն ազատագրե-
լով, հայ մարտիկներն առաջ էին շարժվում:
Թամանի թերակղզում նրանք արդեն ան-
ցել էին դժվարին ու հերոսական ճանա-
պարհ: Եվ, չնայած անքուն գիշերների
տանջանքներին, մի ուժեղ, անստնձ դա-
ցում ռադիկներին ձգում էր դեպի առաջ:
Նրանց սրտերը, թափախում էին առաջին
ազատարարը լինելու երջանկությամբ:

Հայ մարտիկների մի ավանդարդային
ջոկատ մոտենում էր Վերխնյայա Բական-
սկայա ստանիցային: Վաղ առավոտյան, աշ-
նանային ցողածածկ դաշտերի միջով, նրանք
չափազանց զգուշությամբ էին առաջանում

դեպի բնակավայրը: Ո՛չ մի կրակոց: Ուրեմն
թշնամին առանց դիմադրելու թողե՛լ էր
ստանիցան: Այդ չէր կարող պատահել: Ա-
մեն մի բարձունք, ամեն մի դյուղ հակա-
ռակորդն օգտագործում էր մեր զորքերի
առաջխաղացումը դանդաղեցնելու համար:

Այս մտքերի մեջ մարտիկներն առաջ
էին շարժվում, երբ ճանապարհից մի քիչ
հեռու նկատեցին գերմանական երկու ա-
կանանետ: Ավելի մոտենալով, ականանետ-
ների շուրջը նրանք տեսան նունակների ա-
ռաջացրած փոքրիկ փոսիկ և ականանետ-
ների վրա դարձանքով կարգացին ուսերեն
լեզվով գրված մի մակագրութուն.

— Трофей майора Хачаняна.

Կարգացին ու բացականչեցին.

— Տղերք, մենք ուշացել ենք, մայուրն
արդեն անցել է այս տեղերով:

Ու մարտիկները շարժվեցին առաջ՝ ի-
րենց սիրելի հրամանատարին հասնելու հա-
մար:



Վերլսնյայա-Բահանսկոյայում գործարանի պայթեցուժը կանխելուց և երկու Փաշիատի անձամբ սպանելուց հետո մայորն իր մի խումբ խիզախներով փախուստի էր մատնել թշնամուն: Նա շտապում էր առաջ, որպեսզի կանխի թշնամու ավերածությունները, հասնի ու ազատի Փաշիատական գերության քշվող սովետական կանանց ու աղջիկներին, սպանի հիսուրդյան բարբարոսներին:

Այժմ մայոր Սաչանյանը հասել էր Գասատադայա: Թշնամին այստեղ գիմադրություն էր կազմակերպել: Կրակում էր գլնգացիրը: Սաչանյանը սողեսող մասեցավ մի կիսաքանդ շենքի, քարերի վրայով վեր բարձրացավ և կրակային գիրք գրավեց ծխնելույղի ետևում: Նա ուշադիր սրբատեց դրսանը: Ընդամենը հինգ փամփուռն էր մնացել: Ուրեմն հինգ փամփուռնով էլ պետք էր ավարտել ուղմական գործողությունը: Սաչանյանը նշանակեա ընտրեց գնդացրոր-

դին: Լսվեց կրակոցի ձայնը, և լսեց գնդացիները:

Մի սպա ուղեց փոխարինել խփված գնդացորդին: Մայրի երկրորդ գնդակը գետին տասլալեց նաև սպային, իսկ երրորդը՝ եֆրեյտորին: Այդ ժամանակ Փաշխտական սնայակերը նկատեց նրան և կրակեց: Փոշի բարձրացավ: Ծխնելույզից մի կտոր կղմինդը պոկվեց և ընկավ գետին: Այդ ըոպեին, կարծես խփված, Խաչանյանն էլ իրեն գետին դրեց:

Սակայն հաղթանակն արդեն տարված էր: Գնդացիներն ու ականանետը թողնելով՝ թշնամին փախուստի էր դիմել:

* * *

. . . Արդեն երեկոն իջնում էր ավերված ու ամայի գյուղի վրա: Ոչ մի ձայն չէր լսվում: Չէր լսվում նույնպես ոչ կատվի մլավոց, ոչ շան հաջոց:

Մայրը Խաչանյանը լուռ նստել էր մի քանդված շենքի առաջ, վառել ծխախոտը և ծուխն արձակելով միտք էր անում: Միտք էր անում այս հրկիզված օջախների, կոյ-

ծանլած ու ամայացած ստանլլցա՛ներլ մա-
սին։ Ինչքան երջանիկ էին ապրում այս-
տեղ հողագործ մարդիկ։ Ոչ հեռու անցյա-
լում, երեկոյան այս սնդորբության ժամին,
նախիրն էր վերադառնում մարմանդ ա-
րտաներից և գյուղը լցվում էր հալթիրան
կովերի բառաչով։ Ու կաթնաղբյուրներ էին
փշշում ամեն մի տան բակում։ Լուսնյակ
գիշերով գարմոշկայի ուրախ հնչյուններն
էին տարածվում այս լայն փողոցներով ու
խնձորենու սպիտակափրփուր այգիներով և
լսվում էր ջահել աղջիկների կարկաչուն ծի-
ծաղը։ Իսկ մի՛թմ...

Այս մտորումների մեջ էր մայրը, երբ
մոտակա տան ավերակներից դուրս եկավ
ամբողջովին ալեհեր գլխով, տարիների ծան-
րության տակ կորացած մի կազակ ու հե-
նամիայտին կաթնիւով մոտեցավ գեպի Խա-
չանյանը։

Սովհատկան հրամանատարին տեսնելով,
նա խոր շունչ քաշեց ու նրա շրթերը դո-
ղալով հագիւլ արտասանեցին.

— Տարւան, բոլորին տարւան, — աղջկանս,
հարսիս... քանդեցին օջախս...

Ծերունին չկարողացավ ավելի խոսել:
Նրա մշուշոտ աչքերից պոկվեցին արցունքի
խոշոր կաթիլներ: Ու կաղակը լաց եղավ:

Խաչանյանը բարձրացավ ոտքի, գրկեց
ծերունուն — ամայի գյուղի այդ մենավոր
բնակչին — ու շնչաց:

— Արիացիր, հայր, արիացիր, քանի կա
կարմիր Բանակը: Մենք քեզ կվերապարձը-
նենք քո աղջկանն ու հարսին: Մենք ահեղ
վրեժ կլուծենք քո քանդված օջախի համար,
քո արցունքների համար...

Մի պահ լռություն տիրեց: Ապա ծերունի
կաղակն արցունքները սրբելով համբուրեց
Խաչանյանին, համբուրեց ջերմորին և օրհ-
նեց հայրաբար...

Ու հրամանատարը, վրեժով բորբոքված
սրտով, շարունակեց իր ճանապարհը:

*
*
*

Այդ օրը ուրախ տրամադրության մեջ
էր Լենինի. — Ստալինի պարտիայի շարքերը
նոր ընդունված մայրը Խաչանյանը. ուրախ

էր ոչ թե նրա համար, որ սաղմական հա-
ջողութեան էր ունեցել: Ո՛չ. նա ուրախ էր
նրա համար, որ երևանից՝ մի մանկապար-
տիկի երեխաներից նամակ էր ստացել: Այդ
նամակը խորապէս հուզել էր նրան: Նստած
ծովիզրին, հայացքը կապտագուշն հորիզո-
նին, նա միտք էր անում: Միտք էր անում
այն անմեղ երեխաների մասին, որոնց ոսկի
մանկութեանն էին ուղում խաղարկեցնել
ֆաշիստները:

Նա իր հայրական երևակայութեամբ
մի պահ փոխադրվեց հինավուրց Երևան քա-
ղաքը, ծանոթ մանկապարտեզը, սևուլիկ,
սևահեր ու թխաչյա երեխաների մոտ: Նրա
սիրտը բարախեց ուրախութեանից: Ապա նա
թուղթն ու մատիտը հանեց դաշտային պա-
յուսակից և հետեյալը գրեց.

«Իմ սիրելի բալիկներ.

Ես ստացա Ձեր նամակը և մեծ ու մեծ
պարգևը—թուղթն ու ծրարները: Ուրախու-
թեանս չափ ու սահման չկա: Դեռ մինչև
հիմա էլ ես չեմ կշտացել ձեր քաղցր, շատ

քաղցր նամակից: Այսօր առաջափոր դիժը
ստուգելիս ձեռքս գրպանս ստարա, հանկարծ
ձեր նամակը ձեռքս ընկավ: Պատմեմ, թե
ինչ պայմաններում հորից կարգացի այն, և
դուք կհասկանաք, թե ինչքան քաղցր է ձեր
նամակը:

Հակառակորդից ընդամենը 500—600 մետր
հեռավորության վրա էի գտնվում: Թշնա-
մին ինձ նկատեց և իմացավ, որ ես մեծ
հրամանատար եմ. նա ամեն կողմից ուժեղ
կրակ բացեց ինձ վրա: Ես կարևորություն
չտվեցի զազանի հաջոցին և շարունակեցի
կարգալ ձեր նամակը: Ընթերցումը դեռ չէի
վերջացրել, երբ հանկարծ ականը պայթեց
ինձ մոտիկ, և նամակը մի քանի տեղից
սլառավեց ու ցրիվ եկավ: Ես սկսեցի հա-
վաքել նամակի կտորները, մինչ ականները
պայթում էին իմ շուրջը: Ձեր նամակը ծակ-
ծկելու համար ես խիստ պատժեցի ֆաշիստ-
ներին, անցա հրահանգչական կետը և հրա-
մայեցի մեր տղանաձիգներին՝ կրակ թա-
փել թշնամու գլխին:

Իմ սիրելի բալիկներ: Ձեր գրած նամակը

պատառոտված և ծակծկված է, սակայն որ-
պես թանկագին, շատ թանկագին հիշատակ,
այն սահուն ևս իմ զինվորական պայու-
սակում: Կուզենայի ծիծեռնակ լինել, թռչել
ձեզ մոտ, մեկիկ-մեկիկ գրկել ձեզ, ու ձեր
թշիկները պինդ-պինդ համրուել: Սակայն
այդ միայն ցանկություն է: Երբ կոչնչա-
ցնենք բոլոր ֆաշիստներին և կառնենք
վերջնական հաղթանակը, այն ժամանակ
ձեր պապաների հետ կվերադառնամ ձեզ մոտ,
հյուր կգամ ձեր մանկապարտեզը և մի լավ
կհամբուրեմ ձեզ բոլորից:

Սիրելի բալիկներ: Ես գիտեմ, որ դուք
շատ ու շատ խելոք եք. ինձ պատմել են
ձեր մասին: Եթե իմանամ, որ դուք չեք
լսում ձեր մամաներին, մանկապարտեզ ժա-
մանակին չեք գնում կամ լաց եք լինում,
այն ժամանակ այլևս ես ձեզ համակ չեմ
գրի. ձեզանից կխոտվեմ և ուրիշի դժայգյա
կղառնամ: Ուրեմն, իմ սիրելի բալիկներ, ես
ձեզ հետ կուռնենամ այսպիսի մի պայման—
ձեր պապաների հետ միասին մենք լավ ու

դերագանց կկռվենք, իսկ դուք էլ խիլոք
եղեք և լավ սովորեք՝

Ձեր մտքին համբուրում եմ ձեզ լսլորիդ.
Ձեր դյադյա Մամիկոնս:

16 դեկտ. 1943 թ»¹

Սաչանյանը ծրարեց այս նամակը և հա-
յացքը շարունակելով հառել ծովին, մի պահ
մտածում էր իր անցյալի, իր մանկուլթյան
և պատանեկուլթյան, իր խաղաղ ընտանեկան
ոջախի, սիրասուն զավակների մասին:

— Չէ՛, չենք թողնի, որ խավարի մեր
մանուկների արևը, մեր երջանկուլթյունը, —
չնշում են Սաչանյանի շուրթերը և նորից
դլուխը ծռում է դաշտային պայուսակի վրա,
գրում է կնոջը.

«Նազ ջան. քեզ հանգիստ պահիր, չը-
ջղայնանաս. ժամանակավոր բան է մեր ի-
րարից հեռու լինելը. մոտ է հաղթանակը,
շատ մոտ: Շուտով Փաշխտական շներին
կջնջենք մեր սիրելի հայրենի հողի երեսից

¹ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատ-
մության Ինստիտուտ, Հայրենական պատերազմի
պատմության կարխնիտ, գործ Մ. Սաչանյանի:

ու էլի կշարունակենք մեր ընտանեկան քաղ-
ցըր կյանքը: Այժմ մնում է, որ դու գերա-
դանց աշխատես թիկունքում, իսկ ես էլ, դե-
ինչ ասեմ, կշարունակեմ ոչնչացնել ավիլի
շատ հիտլերականներ:

Երեխաներին լավ դաստիարակիր:
Քո Մամիկոն՝¹

* * *

Փողոցային կատաղի մարտեր էին մղվում՝
կերչը աղստագրելու համար: Խաչանյանը
նորից իր զորամասով գտնվում էր առա-
ջավոր դժուժ, քաղաքը բաժանող ջրանցքի
ափին: Փաշխատհերը համառորեն դիմադրում
էին՝ ծովը թափվելու երկյուղից: Արյունալի
կռիվներ էին տեղի ունենում ամեն մի
տան համար:

... Գարնանամուտի աստղալի դիշերը տա-
րածվեց ավերակ կերչի վրա: Քաղաքի այս
ու այն ծայրամասում, դիշերվա խավարի

¹ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատ-
մության Ինստիտուտ. Հայրենական պատերազմի
պատմության կարիներ, դործ. Մ. Խաչանյանի:

մեջ, կարժրին էին տալիս սմբակոծությունից այրվող տները: Երբեմն լսվում էին ավտոմատային և զնդսույրային կարճ կրակահերթեր:

Առաջավոր գծում, թշնամուց ընդամենը 20—25 մետր հեռավորության վրա մերոնք լուռ հսկում են հակառակորդին: Ոմանք սպասելուց տխրել են, ոմանք մտքերով փոխադրվել են իրենց հայրենական ջերմ օջախները: Այդ պահին նրանց մոտ հայտնվում է շինելի մեջ փաթաթված, սևաչյառ թխադեմ մի փոքր, անհանդիստ մարդ, որը ժպիտը դեմքին ցած ձայնով ողջունում է մարտիկներին:

Բոլորը ճանաչում են իրենց սիրելի հրամանատարին, իրենց հորը—մայրը Մամիկոն Խաչանյանին:

— Հոմ չէք մըսում, սղերք, — հարց է տալիս նա ու նստում մարտիկների մոտ: Ապստովիլացնում.

— Դուք չէք մըսում, բայց ֆրիցները մըսում են. նրանց պետք է տաքացնել, այն-

պես տաքացնել, որ էլ բոլորովին ցուրտ
չզգաս: Կարծեմ դեմ չեք լինի:

— Համաձայն ենք, ընկեր մայր,—սու-
տասխանուում են բոլոր մարտիկները:

Ջերմ զրույց է սկսվում, որ տևում է մին-
չև ուշ գիշեր:

* * *

1944 թ. հունվարի 28-ին էր: Առավո-
տյան շատ վաղ զարթնեց գնդի հրամանա-
տարի շարային գծով տեղակալ մայոր Խա-
չանյանը: Նա հուզված էր: Հուզված էր նրա
համար, որ դեռ չէր կարողացել կատարել
գիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր
Ն. Սաֆարյանի առաջադրած խնդիրը, և եր-
կրորդ՝ քիչ առաջ լավագույն մարտիկներից
մեկին մահացու լսվել էր թշնամու սնայ-
պերը: Նվ այժմ, ատրճանակը ձեռքին, մի
տան լուսամուտի առաջ կանգնած, նա
փնտրում էր ֆրիցներին, նրանց սպանելու,
վրեժ լուծելու համար:

Վերջապես դիմացի շենքի կիսակործան
լուսամուտի մոտ նա նկատեց քողարկված

մի ֆաշիստի և ատրճանակով կրակեց նրա վրա: Ֆաշիստը գլուխը վեր բարձրացրեց և սպա ընկավ խփված: Խաչանյանը կրակեց երկրորդ, երրորդ, չորրորդ փամփուշտները: Բայց էբ հանգստանում նրա հուզված սիրտը: Որպես վրեժի մարմնացում, բուռնցքը ցցած և ձեռքում ատրճանակը բարձր պահած, նա խրոխտ կանգնել էր լուսամուտի առաջ, թշնամու գեմ-հանգիման.

А он мятежный, просит бури,
Как будто в бурях есть покой..

Պղտորվել էին նրա աչքերը և թվում էր, թե ահա, նա մենակ դուրս կգա սպարեզ, ֆաշիստական դադանի գեմ, և նրա ձեռքում անխնա կգործի հատուցման սուրը..

— Ընկե՛ր մայոր, կխփվե՞ք, գգ՞ւյշ..

Նա կտրծես չարացած ետ նայեց: Իր սիրելի կտրիճներից մեկն էր:

— Կխփվե՛մ, ասում ես. ոչխնչ, այնքան էլ ցավալի չի լինի...

Ապա նա մի պահ լռելուց հետո ավելացրեց.

— Իմ գնդակներից արդեն տասնյակ

Քրիցնեք են զնացել մյուս աշխարհը...

Եվ մարտիկը նկատեց, որ հուզումից ու կիզիչ վրեժի զգացումից դողում էին հրամանատարի դեմքի մկանները...

Մայրը նորից նշան բռնեց ատրճառակով և կրակեց: Այդ միջոցին թշնամու զիրքերից էլ լավեցին կրակոցի ձայներ, ու Սաչանյանը ճակատից խփված ընկավ գետին:

Երա ձեռքը դեռ ատրճառակի ձգանին էր...



Ամբողջ միավորման մեջ արագ տարածվեց մարտիկների սիրելի հայր ու հրամանատար, մարտական չորս շքանշանի կավալեր Մամիկոն Սաչանյանի մահվան բոթը: Ամբողջ գործատուով մեկ սարսուռ անցավ ոսպմիկների երակներով, և վրեժով բորբոքվեցին նրանց սրտերը:

Մարտիկներն անհամբեր էին դարձել

— Կերջապես ե՞րբ է տրվելու գրոհի ազդանշանը... Մայր Սաչանյանի սպանու-

Թյան դուժը խորապես ցնցել էր նաև դի-
վիզիայի հրամանատար գեներալ Սաֆա-
րյանին, որը, կակիժը սրտում, հետևյալ սու-
ղերը գրեց մամուլին իր երբևմնի ուսուցչի
մասին.

— Լեռնաշխարհի զավակն ընկավ մեր
սովետական ժողովուրդների ազատության
և անկախության համար մղվող սրբազան
մարտերում: Նա կովեց ու գոհվեց որպես
հերոս, սրպես դյուցազն: Մամիկոն Խաչա-
նյանն արդեն իր համար անմահության հու-
շարձան է կանգնեցրել ժողովրդի մեծ սրբ-
տում: Նրա անունը ոսկի սատերով զրվեց
Հայրենական այս ահեղ պատերազմի դյու-
ցազնամատյանում: Եվ երբեք չի թառամի
սիրելի Մամիկոնի հիշատակը, որ ջերմ
հայրենասիրության պայծառ ու անմոռա-
նալի օրինակներ տվեց ապագա սերունդ-
ներին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043291

[204]

ԳՐԱԴԱՐԱՆ ԽՈՒՆԱՎԱՆԻ

1839

A $\frac{I}{6984}$